ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3701 ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8
Հեռ.(0287) 2.12.17, (060)747077
Ֆաքս 2.12.02, (060)747077

N 1313

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024թ.

«ՍՏՅՈՊՇԻՆ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ՝ ԼԻԼԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Ծանուցում

Հարգելի Լ.Գևորգյան.

Ջերմուկի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու)և «ՍՏՅՈՊՇԻՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 19.05.2023թ-ին կնքվել է N ՋՀ-ԳՀԾՁԲ-23/5 ծածկագրով Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի խմելու ջրի ակունքի հիմնանորոգման աշխատանքների որակի նկատմամբ տեխնիկական հսկողությանծառայության մատուցման գնման պայմանագիր(այսուհետ՝ Պայմանագիր):Հիշյալ պայմանագրի շրջանակներում «ՍՏՅՈՊՇԻՆ» ՍՊԸ-ն պարտավորվել է մատուցել Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի խմելու ջրի ակունքի հիմնանորոգման աշխատանքների որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն), որի ժամկետը սահմանված էր մինչև համապատասխան շինարարական աշխատանքների կատարման ավարտ /համապատասխան շինարարական աշխատանքների ավարտը մինչև 01.11.2024թ.-ը/:

Նշված ժամանակահատվածում Ջերմուկի համայնքապետարանի աշխատակիցների կողմից բանավոր կերպով բազմիցս զգուշացվել և տեղյակ է պահվել «ՍՏՅՈՊՇԻՆ» ՍՊԸ-ին՝ շինարարական աշխատանքների ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև կատարված աշխատանքների մեջ բազմաթիվ թերություններ ունենալու և այդ թերությունները ժամանակին շտկելու մասին:Ջերմուկի համայնքապետարանի կողմից՝ 17.09.2024թ-ի թիվ 1026 ելից գրությամբ «ՍՏՅՈՊՇԻՆ» ՍՊԸ-ին հերթական անգամ տեղեկացվել է աշխատանքների թերությունների, դրանց վերացման և նշվածներով պայմանավորված պարզաբանում տրամադրելու մասին, ինչին մինչ օրս պատասխան չի ստացվել: :Օրենքով սահմանված կարգով ձևավորվել է աշխատանքների արդյունքը ընդունող հանձնաժողով, կատարվել է այցելություն աշխատանքների շինարարական հրապարակ, որտեղ պարզվել է աշխատանքների որոշ բաղադրիչների նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու և նշված թերությունները չշտկելու փաստերը, ինչի արդյունքում Ջերմուկի համայնքապետարանի կողմից միակողմանի լուծվել է կապալառու կազմակերպության հետ կնքված պայմանագիրը:«ՍՏՅՈՊՇԻՆ» ՍՊԸ-ն չի ապահովել պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրով նախատեսված իր պարտավորությունների պատշաճ կատարումը՝ մասնավորապես.

- չի վերահսկել և գնահատել շին.աշխատանքների գործընթացը, որպեսզի ապահովվի շին.աշխատանքների ավարտը՝համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի
- չի կատարել որակի և քանակի ամենօրյա հսկումը (համապատասխան նշում կատարելով մատյանում), այն աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները, որոնք կատարվում են կապալի պայմանագրի իրականացման շրջանակում

- շինարարության ողջ ընթացքում չի ապահովել տեխ. հսկիչի մշտական ներկայությունը օբյեկտներում

Հաշվի առնելով վերոգրյալները և համաձայն Ջերմուկի համայնքապետարանի և «ՍՏՅՈՊՇԻՆ» ՍՊԸ-ի միջև՝ 19.05.2023թ-ինկնքվածN ՋՀ-ԳՀԾՁԲ-23/5 ծածկագրով պայմանագրի 2.1.3կետի, Ջերմուկի համայնքապետարանը 27.11.2024թ.-ից միակողմանի լուծում է «ՍՏՅՈՊՇԻՆ» ՍՊԸ-ի հետ՝ 19.05.2023թ-ինկնքվածN ՋՀ-ԳՀԾՁԲ-23/5 ծածկագրով պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի 526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետի, ինչպես նաև N ՋՀ-ԳՀԾՁԲ-23/5 ծածկագրով պայմանագրի 7.11 կետի դրույթները:

«ՍՏՅՈՊՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները սահմանված կարգով ներկայացվելու են համապատասխան կառույցներին Ջերմուկի համայնքապետարանին փոխանցելու նպատակով և կիրառվելու են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա) պարբերության պահանջները:

Ծանոթություն:Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

Կատ.՝ Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ Սմբատ Պապոյան :